ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱԱՀ-ՀՄԱՊՁԲ-19/87 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«11» դեկտեմբերի 2019թ.

ք. Երևան

2019թ-ի դեկտեմբերի 3-11, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև ՀԱԱՀ հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ՀԱԱՀ-ՀՄԱՊՁԲ-19/87 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Հ. Զաքոյան	ՀԱԱՀ հիմնադրամի տնտեսական գծով պրոռեկտոր՝ նախագահ,
Ս. Մարգարյան	ՀԱԱՀ հիմնադրամի տնտեսական վարչության պետ՝ անդամ,
Ա. Ստեփանյան	ՀԱԱՀ հիմնադրամի նտեսական վարչության գլխավոր ինժեներ՝ անդամ,
Կ. Ավետիսյան	ՀԱԱՀ հիմնադրամի գրադարանի գրադարանավար՝ անդամ,
Ռ. Մանասյան	ՀԱԱՀ հիմնադրամի մատակարարման բաժնի առաջատար մասնագետ՝ անդամ,

Ե. ՀարությունյանՀԱԱՀ հիմնադրամի գնումների բաժնի մասնագետ, քարտուղար.

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Զաքոյանը, իսկ քարտուղարն էր՝ Ե. Հարությունյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱՀ-ՀՄԱՊՁԲ-19/87 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ՀԱԱՀ-ՀՄԱՊՁԲ-19/87 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Հ. Զաքոյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնվելիք գնման առարկաների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	**Շերտավարագույր**	**1067000**

ՀԱԱՀ-ՀՄԱԱՊՁԲ-19/87 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի դեկտեմբերի 3-ին, ժամը «14:00»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ՀԱԱՀ-ՀՄԱԱՊՁԲ-19/87 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ, փոստ
1	Ֆոտոն ՍՊԸ	ք. Երևան, Ռոստոմի 1	ms.foton2014@mail.ru
2	Պետրոսյան Հոլդինգ ՍՊԸ	ք. Երևան, Քաջազնունի 1	petrosyanholding@gmail.com
3	ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ	ք. Երևան, Գալշոյան 15/2	info@HouseMaster.am
4	Լեվել-Էս ՍՊԸ	ք. Երևան, Դավիթ-Բեկի 106/7	level.sp@gmail.com
5	Արտակ Կարապետյան Հարությունի ԱՁ	ք. Ալավերդի, Սանահին սարահարթ շ. 1/1, բն.51	artak.karapetyan.7519@mail.ru

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Հայտ/եր/ը կազմվել և ներկայացվել են ՀԱԱՀ-ՀՄԱԱՊՁԲ-19/87 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան. ,
- Ներկայացված հայտ/եր/ում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.,
- Ներկայացված հայտ/եր/ում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին., բացառությամբ **ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ-ի՝** ներկայացված ընթացակարգի մասնակցության դիմումում՝ հավելված N 1, լրացված չէ հրավերով նախատեսված «հեռախոսի համարը» դաշտը և գնման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու մասին հավաստման և ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու վերաբերյալ պարբերությունում լրացված չէ «մասնակցի անվանումը» դաշտը, **Լեվել-Էս ՍՊԸ**-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին՝ բացակայում են չափագրման և տեղադրման վերաբերյալ տեղեկատվությունները և **Ֆոտոն ՍՊԸ-ի՝** ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ ներկայացված գնային առաջարկում առկա են թվաբանական անճշտություններ:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Հ/հ	Մասնակցի			Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «Х»	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	1	Х	Լեվել-Էս ՍՊԸ	460750	552900
	2		Արտակ Կարապետյան Հարությունի ԱՁ	582000	698400
	3		ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ	677060	677060
	4		Պետրոսյան Հոլդինգ ՍՊԸ	776000	931200
	-		Ֆոտոն ՍՊԸ	604124.17	724978

Որոշվեց՝

1. Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

2. **Ֆոտոն ՍՊԸ-ի** հայտը գնահատել անբավարար և մերժել:

3. Նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով:

4. Քարտուղարին՝ ծանուցել **ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ-ին և Լեվել-Էս ՍՊԸ-ին՝** առաջարկելով սահմանված կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձաժողովն արձանագրեց, որ **ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ-ի և Լեվել-Էս ՍՊԸ-ի** կողմից սահմված կարգով իրականացվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկումը:

Որոշվեց՝

1. Ներկայացված հայտ/եր/ը գնահատել բավարար՝ բացառությամբ **Ֆոտոն ՍՊԸ-ի**:

2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հանձնաժողովն արձանագրեց իր կողմից պատճառաբանված որոշման բացակայությունը՝ Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը ստուգելու:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Զաքոյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Մարգարյան _____

Ա. Ստեփանյան _____

Կ.Ավետիսյան _____

Ռ. Մանասյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ե. Հարությունյան _____